մասից: Եւ այդ անբաւականութիւնը գրեթէ միշտ ունի իր հիմնական պատճառները:

Այդպէս է կեանքը Եւրոպայում: Այդ անբաւականութիւնը հասարակութեան այլ և այլ մասերի մէջ, թէև աւելի փոքր չափով, կայ և մեզանում: Ա. այժմ զորձարանները, ֆաբրիկաները և մեծ կապիտալիստները մեզանում քիչն թիւով, Աստուծու ողորմութեամբ մենք չունենք և այն ամէն կայքից զրկված շինականների դասը, որ Եւրոպայում կազմում է պրոլէտարիատ անուանված դասը: Ուստի և վերև յիշված անբաւականութիւնն էլ մեզանում պիտի յայտնվի ուրիշ ձևով, ուրիշ կերպարանք պիտի ունենայ:

Արդարև, մենք տեսնում ենք, որ մեզ մօտ անբաւականութիւնը յայտնվում է զլխաւորապէս զիւղական և քաղաքային ազգաբնակութեան մէջ, մի կողմից մանր վաճառականների, իսկ միւս կողմից մանր արդիւնաբերողների մէջ: Անտարակոյս մեր ժողովրդի դրութեան հետ ծանօթ անձինքը յաճախ լսած են նորանից դառն խօսքեր և անբաւականութեան արտայայտութիւն մեր վաճառականների դէմ:

Կովկասի ամէն քաղաքներում վաճառականները հանդիսանում են որպէս տիրապետող դասը: Բոլոր անշարժ կայքերը նրանց են պատկանում: Այդ երևոյթը նկատվում է ոչ թէ միայն քաղաքներում, բայց և փոքր աւաններում: Կարող էք հաւատի լինել, որ բոլոր զիւղացիների ամբողջ կայքը գտնվում է մի կամ երկու վաշխառու-վաճառականի ձեռքում, որք կամ նոյն տեղ են բնակվում, կամ մօտակայ քաղաքից ձեռնամուխ են լինում այդ գործին:

Հաստատ կարելի է ասել, թէ մեր զիւղացիների կալվածների էսը, մանաւանդ Քարթալինիայում և Կախէթում, գրաւ դրած են այդ մանր վաճառականների մօտ, և եթէ այդ երևոյթին չեն առաջն առնի, շուտով և բոլոր նրանց կալվածները կանցնեն վաշխառուների ձեռքը: Մեր զիւղացիք խեղդված են պարտքերի մէջ, և պարտքը օրից օր ամում է: Ասում են, օրինակ որ Կիզեքցիք չէին գտնվի այս բօյկոտի այնպիսի ոգորմելի դրութեան մէջ, եթէ նրանք ունենային գոնէ մի կտոր հող որ գրաւ դրած չը լինէր: Այդ յայտնի մի իրողութիւն է, որ պարտատէր—վաճառականները հունձքի կամ քաղման ժամանակ առնում են ցորեան կամ գինի մի որ և է չնչին պարտքի հաշվով:

Մենք 'ի հարկէ չենք հաստատում, որ վաճառականներն են միայն մեր տնտեսական անկման պատճառ, բայց չենք կարող ուրանալ, որ մասամբ մեր առևտրական դասը ունէր և այժմ ունի մի յայտնի ներգործութիւն այդ անկման վերա:

Տնտեսական դրութեան բարելաւացնելու միջոցները, ինչպէս ամէն ազգի մէջ, ընդհանրապէս յայտնի են, այն է՝ ժողովրդական լուսաւորութիւն, և աշխատանքի աւելի կանոնաւոր կազմակերպութիւն:

Ս. Մ.

ՆԱՄԱԿ ԶԱՔԱԹԱԼԻՑ

«Մշակի» 8-դ համարում մեք կարդացինք ներքին լուրերի մէջ Հայ և Վրաց զիւղատնտեսական լրագրաց վերաբերութեամբ մի ծանուցումն, որով յայտնում էք թէ խմբագրութիւնը իր վերա է առնում ըստ կարելուն չափ լրացնել հայոց զիւղատնտեսական թերթի պարտաւորութիւնը, այդ ծանուցումն մեզ տեղիք տուեց հաղորդելու Ձեզ մի քանի տեղեկութիւն, որ եթէ արժան կհամարէք խընդրեմ հրատարակել Ձեր սիրելի լրագրի միջոցաւ:

Անցեալ տարի փորձի համար Զաքաթալայ քաղաքի մէջ պ. Ի. Ղ. ցանեց ամերիկայի ծխախոտի սէրմից (դ ը ե ո ւ բ է ք). ժողոված ծխախոտը բաւականին լաւն էր և ծխողներն հաստատում էին որ պատվական ծխախոտ է: Այնտեղ նահանգում նմանապէս Լեզգիներն ցանում են ծխախոտ, բայց նոցա ցանածը աւելի հասարակն է և հետևողութիւնն բոլորովին անկանոն, նոքա ցանելուց յետոյ ածուներում թողում են այնպէս մինչև մեծանում են թերթերն և հասնելուց յետոյ ժողովում են ու չորացնում արեգակի տակ և միշտ ցանած սերմն լինում է տեղական:

Այս տարի պ. Ղ. դարձեալ ցանեցի ծխախոտ, բայց աւելի մեծ ուշադրութեամբ, ուստի վարձել է մի գեսեատին հող ու արդէն մշակում են. կարծիք չկայ որ նոր հետևողութիւնը աւելի կանոնաւոր կլինի. փորձուցեց որ այնտեղ կարելի է լաւ ծխախոտ բ. 1871 թվում Սիզնախու գաւառից ստացած ծխոտը աշխարհանդէսում լաւ նշանակութիւնացաւ:

Զաքաթալու նահանգի հողխարերութիւնը և երկրի զրութիւնը խօստանում որ այնտեղից կարելի է լաւ ծխախոտ ստանալ: Այս երկիրը հիւսիսային կողմից պաշտպան լինելով կովկասու մեծ լեռան զօտիներից, կարող է որ բոյսերը ենթարկվեն հիւսիսային սառակար հողմի ներգործութեանը, այդ երկրումարելի է ունենալ մեծ ծխախոտի պլանտացիա: ծխախոտը պահանջում է շատ անգամ ջրել, մի ոչն ժամանակը պիտի լինի չոր երկիր. պէտք է թէ որ այն նահանգի մի քանի զիւղոցի հո ճախճախային է ինչպէս օրինակի համար Բաքանու հողը, ի հարկէ, այդ տեղեր ծխախոտը լաւարող չէ լինել, բայց Կախու, Ալիբէկլուի, Ալիբէու, Մուխախի հողերը շատ յարմար են ծխատու ցանելու: Ծխախոտի սէրմը ցանում են դաւնը մտնելուն պէս մինչև մարտի 15, որպէս զի ճիճուներն չի վնասեն ու չի ոչնչացնեն նոր բուսած բոյսին: Նախ հարկաւոր է չինել գետնից գոնէ 1 արշին բարձր մի ածու ու այնտեղ ցանել սերմի հարկէ, այն ածուն չորս կողմը ճիպոտով ցանկ քաշել ու մէջը աղրախառն հողով լեցնել. երբ բոյսը աճում է բաւականին, յայտնում հարաւոր այնտեղից սածիլ (տիթիլ) անել պլանտացիայի (ազարաղ) համար պատրաստած ածուների մէջ, բոյսը աճելուն պէս աստիճանաբար պէտք է նորան զլուխներն խուզել որպէս զի տերևներն մեծանան ու զօրեղանան, ջրել հարկաւոր է շաբաթը երկու անգամ, իւրաքանչիւր բոյսի թփի վերա հարկաւոր է թողնել 10—12 տերևներ: Ցուլիս ամսոյ վերջերին երևում են տերևների վերա դեղին բծեր (լաքաներ)՝ այդ հանելու նշաններն են, այդ տեսակ հասած տերևներն պէտք է խոկոյն հողվել, եթէ կարելի է չորացնել նորանց չուաքում՝ շաբաթուն յատկութիւնը պահպանելու համար: Երկրորդ քաղ՝ Հ-փաթալու օգոստոսի վերջերին. իսկ երրորդի վերա ուշադրութիւն չի դարձրվում: Սորանից կարելի է եզրակացնել որ Ալիբէկլոյ կամ Կախ գիւղորայքում առաջին քաղն անկասկած կլինի Ցուլիսի կէսին, երկրորդը օգոստոսի 20-ին, իսկ երրորդը սեպտեմբերի վերջին: Զաքաթալու նահանգից ոչ հեռու Սիզնախու գաւառում Ղարաղաջ անուանեալ դաշտում պ. պ. Սաֆարեանցներն անցեալ 1862 թ. ցանել էին ծխախոտ կարծեաք քէօբէկ. բոյսը բաւականին աջող էր եղած, բայց դեռ ես չի հասած՝ մորեխը փչացրել էր բոլորովին, այնու ամենայնիւ ժողովուած 20 փութոյ չափ ծխախոտը բաւականին լաւն է եղել բայց չափից դուրս զօրեղ (թունդ). ի հարկէ դա առաջինն երկրի պարարտութիւնից է և երկրորդ էլ որ քիչ տերևներ են պահած թփերի վերա: Այս տարի դարձեալ Սաֆարեանցներն մտադիր են ցանելու մի և նոյն տեղն ծխախոտ, տեսնենք ինչպէս կլինի. Ղարաղաջի դաշտը ենթակայ է հիւսիսային հողմին՝ կարծիք չկայ որ այնտեղ լաւ չէ կարող լինել ծխախոտը:

Աէքսանդր Մէլիք-Փաշայեանց

ՆԱՄԱԿ ՂՈՒԲԱՅԻՑ

Ղուբան ունի երկու եկեղեցի՝ մէկը Հայոց մէկը Ռուսաց: Հայոց փոքրիկ և գեղեցիկ եկեղեցին շինուած է սրանից 17 տարի առաջ հանգուցեալ Տփխիսեցի Աստփաննոս Անդրէասեան Լաղարեանի ծախքով և սրա Հիւսիսային դրան առաջև ամփոփուած է այժմ այդ երջանկայիշատակ մարդու մարմինը գեղեցիկ յիշատակով: Ղուբայու հայը ի հարկէ այն ժամանակ թուով շատ փոքր էր, որ ինչպէս պատմում են երկու կամ երեք տուն հաղիւ կը լինէր, բայց յետոյ Ղուբի (երկրի) բերքը, պտղի առատութիւնը և օդատէտ առևտրականութիւնը շատերին յայտնի լինելով, շատ տեղերից ազգատ բնակիչներ սկսեցին գաղթել և Ղուբայում բնակվիլ. այդ գաղթականութիւնը մինչև օրս էլ շարունակվում է և մեծ մասամբ Ղարաբաղից և Շամախուց են լինում: Այժմ մեր եկեղեցին ժողովրդի թուին համեմատ բաւական փոքր է, ուստի ժողովուրդը մի քանի տարիներից յետոյ ստիպված պէտք է լինի մի նոր եկեղեցի էլ չինել:

Այս եկեղեցում պաշտօն են կատարում երկու քահանայք՝ սրանց կեանքի վերա նկարագրութիւն անելը կարծեմ աւելորդ կը լինէր, որովհետև մեր ժամանակում հոգեորականներն արդէն հասարակութեան ծանօթ են:

Մեր մինչև այժմ ուշադրութեան արժանի չեղած Հոգևոր դպրոցը որ իւր սկզբնաւորութիւնից չատ դանդաղ ընթացք էր ստացած, նոր նոր սկսել է թոյլ ու ծանր քայլերով յառաջ գնալ, որովհետև հոգաբարձուները, որ մինչև այս տարի անունով էին միայն հոգաբարձու, այժմ փոքր ի շատէ սկսելն ուշ դարձնել ուսումնարանի վերա և երբեմն ուղղել նրա պակասութիւնը: Այս նոր շարժմունքն էլ մեզ չէին վստահացնել այս խօսքերը ասելու երբ նոր եկած պօլսեցի Կարապետեան Յակովբ վարժապետի աշխատութեանց պտուղները չտեսնուէին չօչափելի կերպով: Ցոյս ունենք որ մեր խղճալու արժանի ժողովուրդը շուտով վերջապէս կհասկանայ ուման անհրաժեշտութիւնը:

Դարբանդից գրում է մեզ պ. Շահիջանեանցը՝ տեղոյս թատրոնը այս տարի շատ յաջողակ անցաւ, ամէն մի գործողութիւն վերջանում էր ծափահարութեամբ և bis-երով: Հինգ ներկայացում տուին և իւրաքանչիւրից 120 բուբլի օգուտ ստացուեցաւ:

Ուրախութեամբ լսում ենք որ տեղոյս երիտասարդներն էլ հետևելով Դարբանդու օրինակին, զիտաւորութիւն ունեն կազմել մի խումբ և եկող տարի մի քանի ներկայացումներ տալ, իսկ նրանից ստացած օգուտով հիմնել մի ընթերցարան: Այս բարենպատակ զգացմունքը մեծ ուրախութիւն պիտի պատճառէ մեր բոլոր հայ-հասարակութեանը:

Լսում ենք որ Բաքուայ մարդասիրական ընկերութեան նոր նախագահ է ընտրուել պ. Պաւլ Շամիլիչ Մէլիք-Բեկլարեանցը. բոլոր սրտով ցանկանում ենք նրան յաջողութիւն իւր սկսածքում:

Մարտի 2-ին. Անտոն Մէլիք-Դատայեանց

ՆԱՄԱԿ ՇԱՄԱԽՈՒՑ

Անցեալ տարվայ մարտ ամիսը մեզանում երաշտութեամբ անցնելու պատճառով, թէ հացը և թէ այլ մթերքը, ինչպէս յայտնի է արդէն լրագիրներից, շատ թանգ գնով էր վաճառվում:

Նոյնը կարծես թէ պատահում էինք և այս տարի, նայելով մարտ ամսոյ առաջին տօթային, ջերմ օրերին, բայց յուրախութիւն առաւել չքաւոր դասին քաղաքի բնակչաց, մարտի 9-ից սկսած եղանակը, թէ քաղաքում և թէ նորա շրջակայքում ձիւնախառն և անձրևային է անցնում. Ապրիլի մանը, որ երկու օր դրանից առաջ ծախվում էր 70 կամ 80 կոպ.,—այժմ ծախվում է ամենալաւը՝ 35 և 40 կոպ.: Կարագ եղի ֆունթը առաջ ծախվում էր 35 կոպ., իսկ այժմ 16 կոպ.: Ամբարներում բաւականի մեծ զումարի ժողոված վաճառելու համար ցորեանը, այժմ ընտասակար հետևանք է ունենում ցորեանատէրերի համար: Ես ակնատէս էի, որ մի քանի պարոններից մի քանի օր դրանից առաջ, խնդրում էին թաղար (50 ման.) ցորեանը 26 և 27 մանէթով, բայց նոքա չէին տալիս: Իսկ այժմ նոյն պարոնայք խնդրում են վաճառողներից առնել թաղարը 14 կամ 15 մանէթով, բայց վերջինները չեն մօտենում.

Մարտի 17. Ա. Մէլիք Շահնազարեանց

Ներսիսեան Հայոց Ազգային-Հոգևոր Դպրոցի Հոգաբարձութիւնը պարտաւորութիւն համարելով յարգել յիշատակը հանգուցեալ Յովսէփ Յովհաննիսեան Էֆէնդեանցի, կարգադրել է կատարել հոգեհանգիստ նորա գերեզմանի վրա, վանքի եկեղեցումը, առաջիկայ ապրիլ ամսոյ 15-ին, նոր կիւրակէ օրը, պատարագից յետոյ: Այս մասին յայտնում է Թիֆլիզցի բարեպաշտ հասարակութեանը: Արժանայիշատակ Էֆէնդեանցը, իւր կենդանութեան ժամանակը, կտակաւ նուիրել է Ներսիսեան Հայոց Ազգային-Հոգևոր Դպրոցին նշանաւոր գումար, որի տոկոսիքը գործ է դրվում յօգուտ նոյն դպրոցի և Թիֆլիզցոյ ծխական ուսումնարանների:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վրաց «Դրօէբա» լրագիրը Սղնախի բնակիչների համար 131 ր. 40 կոպ. հաւաքելուց յետոյ, հասցրել է այդ գումարը Թիֆլիսի աղնուականների ներկայացուցչին:

***

Մեր խմբագրութիւնը չնորհակալութեամբ ստացաւ երկու հայ զրքոյկ՝ մինը Թիֆլիսում հրատարակված պ. Ա. Նահապետեանից թարգմանված Ռէօմէի մանկավարժական նամակները, միւսը պ. Զ. Մսերեանցից Մոսկվայում հրատարակվող «Փարոս» անունով բանասիրական դիտելեաց առաջին տետրը:

***

«Մեղու Հայաստանի» լրագիրը հաղորդում է որ մի քանի հայ օրիորդներ և երիտասարդներ զիտաւորութիւն ունեն ապրիլ ամսի վերջին տալ քաղաքիս ձմեռային թատրոնում բարեգործական նպատակով պ. Գ. Սունդուկեանցի դեռ չը ներկայացրած «Քանդած օճախ» կոմեդիան:

***

Ինչպէս յայտնի է մեր ընթերցողներին, առաջին պաշտօնական առաջարկութիւնը քաղաքային վարչութեան գազի և ջրանցքի մասին, արել է Եվարէնի, Ֆօն-Դէդէնի և Մոորի ընկերութիւնը, (որոնց այստեղի ներկայացուցիչն է պ. Բոգաչովը): Լսում ենք այժմ, որ վարչութիւնը ստացել է առաջարկութիւն մի նոր ընկերութիւնից, կազմված հետևեալ անձինքներից՝ ինժէնէր-պօլկովնիկ Գերսէվանով, գէնէրալ-չտաբի պօլկովնիկ Ստէրնիցկի, ինժէնէր Զէզէման և անգլիացիք՝ Պրէտիմէն և Լօալ: Վերջինը փօթի-թիֆլիսեան երկաթուղու չինողներից մինն է (!):

***

Դարձնում ենք մեր ընթերցողների ուշադրութիւնը այն նոր ուղղութեան վրա, որ չուտով մտնելու է ռուսաց բարձր կառավարութեան գործունէութեան մէջ կ օ ն ց է ս ի ա ն ե ր տալու կողմից: C. Ber. Bta. լրագրում կարդում ենք, որ ճանապարհների մինիստրութիւնը մշակել է այդ խընդրին վերաբերութեամբ մի նոր պրոէկտ, որի զօրութեամբ կ օ ն ց է ս ի օ ն է ր ն ե ր ի միջնորդութիւնը պիտի վերջնվի և տէրութիւնը՝ պիտի ինքն ձեռք տայ հետազօտութիւններին, պիտի ինքն մշակի պրոէկտներ և հաշիւներ, վերջապէս ինքն տոբագրութիւն բաց անէ բաժանորդական (ակցիօնէրնի) դրամագլուխ ձեռք բերելու համար: Ստորագրութենից յետոյ, ընտրվում է կառավարութիւնը, որին տէրութիւնը յանձնում է կ օ ն ց է ս ի ան:—Դարձնում ենք և մեր քաղաքային վարչութեան ուշադրութիւնը յիշված լրագրի 66-որդ համարի վրա:

***

Լսում ենք որ Թիֆլիսի քաղաքային վարչութեան ընդհանուր ժողովը մօտիկ օրերումս զուգ մարվելով. պիտի զրաղվի իր նստերում զլխաւորապէս երկու առարկաներով՝ առևտրական դատարանի և արուեստագործական ուսումնարանի խնդիրների քննութեամբ... վերջապէս.... Բայց տեսնենք:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՇՎԷՅՑԱՐԻԱ

Հին կաթոլիկների կուսակիցները (անսխալականութեան հակառակորդները) բազմանում են այդտեղ: Այդ կուսակցութեանը պատկանող մի քանի նոր համայնքները հիմնվել են Շվէյցարիայի այլ և այլ կանտօնների մէջ:

„Kölnische Zeitung" լրագիրը հաղորդում է որ Բազէլի սրբազան Լաշա եպիսկոպոսը իրան սեփականացրել է եկեղեցական փողերը, որ այդ առիթով նրա դէմ քննութիւն է բացվել և խօսք կայ անգամ, որ նրան կալանաւորեցին:

ԱՄԷՐԻԿԱ

Մարտի 4-ին Միացեալ-Նահանգների նախագահ պ. Գրանտը մտաւ իր պաշտօնակատարութեան երկրորդ շրջանը: Այդ առիթով նա ճառ կարդաց, որ շատ նշանաւոր է իր ե ր և ա կ այ ա կ ան և ա ն գ օ ր ծ ա գ բ ե լ ի զաղափարներով: Պ. նախագահն հաւատացած է, որ բոլոր ազգութիւնները ձգտում են դէպի հանրապետական ձևը և օրինակ պիտի առնեն Ամերիկայից, որ բոլոր աշխարհի համար առաջնորդ պիտի դառնայ, բացի սրանից նա աւելացնում է՝ որովհետև առուտուրը, կրթութիւնը, մրտքերի և նիւթերի շուտ փոխանակութիւնը, թէ շոգու թէ տելեգրաֆի միջնորդութեամբ ժամանակով ամէն բան կը փոխէ, ուստի ես կարծում եմ որ Ամենակարողը այնպէս է կարգադրում աշխարհը, որ բոլոր ազգերը ժամանակով կազմեին մի ա զ գ և մի լ ե զ ո ւ:

Գրանտը չէ ասում ինչ լեզվով կը խօսէ նորա երևակայական ազգութիւնը, բայց ինչպէս երևում է, ամէրիկական լեզուն կը լինի և ինքն էլ երկրագնտի նաւագան կը դառնայ, որովհետև նա անապատի ինքնահաւանութեամբ աւելացնում է՝ «ես կօգնեմ և կը նպաստեմ Կօնդէսի բոլոր առաջարկութիւններին, որք յանալ նպատակին կը ձգտեն»։ Պ. Նախագան կարծում է որ այն ժամանակ կը վերջնվին զօրքեր և կը ոչնչանան պատերազմները։

Բայց մենք համաձակվում ենք, ասում է մի գերմանական լրագիր, չը համաձայնել նրան ելի պետական մարդի կարծիքներին։ Եթէ բոլոր ազգերը միաք ունենային ձգտել մի լեզու, մի ազգութիւն և մի կրօնք կազմելու, նրանի արիւնահեղ պատերազմները ոչ թէ կը վերջնվէին, այլ ընդհակառակն կը սաստկանային, որովհետև նրանցից ամեն մինը, (ինչպէս և պ. Գրանտը) կուզենար, որ իր լեզուն, իր կրօնքը, իր ազգային տարրը տիրապետէր։

ԻՏԱԼԻԱ

Մարտի 9-ին Իսպանիայի հրաժարեցրած Ամէդէյ թագաւորը վերադարձաւ իր հայրենիքը, դարձեալ որպէս Աստուծի հերցողը։ Ջէնուայի „Movimento“ լրագիրը տպել է Գարիբալդիի նամակը, որ ուղղած է իր կուսակիցներին և որտեղ ծերունին յայտնում է թէ չաժէ յարուցանել հանրապետական շարժումը Իսպանիային օգնելու համար, այլ պէտք է սպասել և խնայել իտալական արիւնը արիշ ժամանակի համար։

Մարտի 10-ին սկսվեցան իտալական պարլամենտում վիճաբանութիւնները զօրքի վերանորոգութեան վրա։ Զինուորական մինիստր Բիկոտտին պաշտպանում էր իր առաջարկված պրօեկտը զօրքի նոր կազմակերպութեան վրա։ Մէն անգամ, երբ նա ասում էր՝ „այդ կազմակերպութիւնը նման է Պրուսիային“ կամ „Պրուսիայում էլ այսպէս է“,—լսվում էին աստիկ ծափահարութիւնները։ Ինչպէս երևում է խնդիրը վճռական կերպարանք է առնում։

Մաձինու տարեդարձի օրը, մարտի 1-ին, պօլիցիան արգելեց ռամկապետական պատգամաւորութեան նրա գերեզմանը գնալու թիւն անելու, վախենալով անկարգութիւններից։

Կոմս Շամբօրը Նորերումս ուղարկեց Հրամի պապին, որպէս Սրբ. Պետրոսի լօմայն՝ 10,000 ֆրանկ։ Ընծան ուղարկվեցաւ մի մատակով, որի հասցէի վրա գրած էր՝ Վատիկանի պատուարժան գերիին, Ֆրանսիայի իշխանաղն տան աքսորվածից։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Ի. ՆԱՄԱԿ

Պ. Բաղիրի ուղևորութիւնից

Ցունվար ամիսն էր։ Ցննդեան ցրտերը սարսափելի մրրիկներով էին անցնում։ Եղանակի խառութեան պատճառաւ ամբողջ երկու շաբաթ ես զգալուցայ մի փոքրիկ քրդաբնակ գիւղում, կանգնվում էի մածնով, կաթով ու կորեակ հացով, տանջվում էի տղերից, որք առանց խտրութեան գնելու, թէ անասունների և թէ նոցա տէրերի, արիւնը անխնայաբար ծծում են։ Մի բան այն ինձ զուարճացնում էր իմ տխուր—բանաստեղծական խրճթի մէջ, այն էր, որ իմ հիւրընկալ գիւղացի գիշերները ինձ զբաղեցնում էր իր հէքիաթներով, և նորա տղամարդը շատ անգամ պարծանքով պատմում էր իր քաջութիւններից ու հաղթութիւններից։

—Ջաւօր ծնողքը. մի անգամ ասաց նա, ցոյց տալով իր կնոջ վերա. չէին ուզում իրանց աղջիկը տալ ինձ կնութեան, թէև իմ հայրս տալիս նոցա դատեր փոխարէն որպէս բաշլըղ (զլխազին) մի ընտիր մատակ ձի ազնիւ ցեղից և քսան զլուխ սպիտակ ոչխար։ Նորա ասում էին իմ հօրը, թէ քո որդին ձոյլ է և երկչոտ, թէ նա անարժան է մեր աղջկան ամուսին կոչուելու։ Բայց երբ ճանապարհորդները սկսեցին զարհուրել ինձանից, երբ իմ բերած թալաններից (կողոպուտ) սկսան կերակրուել մեր ցեղի աղքատները, երբ իմ մզրախը (նիզակը) սկսաւ շուտ շուտ ներկուել ասոյներիս արիւնով,—իմ անունը անմահացաւ։ Մեր ցեղի աղջիկները տարփանքով մտածում էին իմ մասին։ Այն ժամանակ զեղեցիկ Ջաւօն ինքը թաւաւ իմ սիրուն նժուգի մէջքի վերա և ես նորան փախցրի մեր վրանը։ Նորա ծնողքը ուրախութեամբ օրհնեցին մեր ամուսնութիւնը...

—Եւ դու պարծենում ես այդպիսի քաջութիւններով։ Հարցրի ես։

—Վկայ են իմ պապերի ոսկերքը որ ես սուտ չեմ պարծենում, և վկայ են այդ նշանները, որ դրած են իմ ճակատի վերա։ Պատասխանեց ծերունի աւաղակը ցոյց տալով երեսի վերայ մի քանի խորն ընկած սպիներ։

Մի գեղեցիկ առաւօտ խոստանում էր փառաւոր օր։ Ես չարունակեցի իմ ուղևորութիւնը։ Մեր ճանապարհը ձգվում էր Սուլտուղի դաշտերի միջով։ Այդ մի փոքրիկ նահանգ է Ուրմիից դէպի հարաւ, որ նշանաւոր է իւր ցորենի բերքով և խոտաւէտ արօտամարգերով։ Նա ունի անասնապահութեան ամէն հարմարութիւնքը։ Սուլտուղը մեծ մասամբ բնակեցրած է ղարափափախ կոչուած թուրքերի մի ցեղով, որք գաղթել են այստեղ անդրկովկասեան գաւառներից։ Դորա կազմում են Ատրպատականի հեծելազօրի քաջ և նշանաւոր մասը։ Մի քանի գիւղօրայքում ցրուած բնակվում են այլ և Հայեր և Ասորիներ, թշուառ մտաւոր և նիւթական աղքատութեան մէջ։

Ինձ հետ ուղեկից էր մի Պարսիկ մօլլայ։ Այդ մօլեռանդը իւր գիտութեամբ և ուսմունքով պատկանում էր իսլամի հոգևորականութեան բարձր դասին։ Ամրողջ օրը նորա ցամաքած շրթունքը շարժվում էին և նա մունջ աղօթքներ էր կարդում։

Հիանալի առաւօտ էր։

Վաղորդեան արշալոյսը վառվում էր բիւրաւոր գոյներով։ Արևի առաջին ճառագայթները հիւսել էին ձիւնապատ սարերի գագաթների վերայ ոսկեայ—վարդագոյն պսակներ։ Բնութիւնը վքանչելի տեսարան էր ներկայացնում։

Ես զարմանում էի մօլլայի սառնասրտութեան վերա դէպի իւրեան շրջապատող հիանալի բնութիւնը։ Երևում էր, որ պարսիկը չեր հրապուրվում նորա գեղեցկութիւններով։

Երբ ես կամեցայ նորա ուշադրութիւնը գրաւել, նա պատասխանեց։

—Այդ բոլորը Աստծոյ փառքն է։ Թող օրհնեալ լինի նորա մեծ զօրութիւնը։

Ես սկսեցի բացատրել մօլլային մի քանի մրտքեր տիեզերքի կազմուածքի, արևի, լուսնի և մեր մոլորակի մասին։ Երբ վերջացրի նորանով, որ երկրագունդը դարձեալ մի աստղ է, որ ունի իւր շրջանը, ընթացքը, մօլլան գլուխս դարձրեց։

—Երկիրը մի անշարժ մարմին է, որ դրած է գետնի տակի եղան մէջքի վերա։ Կտրեց նա իմ խօսքը։

—Որպէս։ Հարցրի ես։

—Անդունդը հուր է, հրոյ վերայ ջուր։ Ջրի մէջ կենում է ահագին ձուկն, որոյ մէջքի վերայ կանգնած է եղը։ Նորա մէջքի վերա դրած է երկիրը, իսկ երկրի վերա դրած է բիւրեղային կամարակապ երկինքը։ Նորա վերա զանազան աստիճաններով բարձրանում են մինչև եօթն երկինքներ,—ապա Աստուծոյ հրաշալի աթոռը։

Եւ աւելացրուց, թէ մեծ մարգարէն, (Մուհամմէտը) իւր բուրակի 1) վերայ նստած, բարձրացաւ մինչև եօթերորդ երկինքը, իսկ Մեսիան համարձաւ մինչև չորրորդ երկինքը։ Դորանով նա կամենում էր ցոյց տալ իսլամի կրօնքի հիմնադրի մեծութիւնը Քրիստոսից։

Ես չուզեցի քննել այդ կրօնական խնդիրը, միայն աշխատում էի ապացուցանել մօլլայի կարծիքի սխալմունքը երկրագնդի մի եղան մէջքի վերայ կանգնած լինելու մասին։

Նա պատասխանեց.—Այդ անհերքելի ճշմարտութիւն է։ Եւ երբ այն եղան մի մազը շարժվում է այնտեղ պատճառում է երկրաշարժ։ Բայց ֆրանկների (եւրոպացւոց) ուսումը դեռ ես չէ հասել այն կատարելութեանը, որ կարողանայր հասկանալ դորանը։

Զը նայելով թէ որքան ծիծաղելի էին իսլամի իմաստունի դատողութիւնքը, այնու ամենայնիւ ես ախորժանօք լսում էի նորան. այնպէս որ մինչև իջևանը հասնելը ես ամենևին չզգացի ճանապարհի ծանրութիւնը։

Այն օր մենք զիշերեցինք մի թուրքի չորբոտանների փարախից բաժանուած մի տեղում, որ կոչվում էր սաքոս։ Զը նայելով այդ անասնական օթևանի չափազանց կեխտոտութեանը, մենք մի բանով միայն գոհ էինք, որ բաւականին տաքացած էր տաւարների շնչով, թէև նորա օդը խեղդելու չափ ծանրացած էր։

Միւս առաւօտը իմ ուղեկիցս յայտնեց, թէ նա չը կամէր այն օր շարունակել ճանապարհը։

—Ինչ պատճառաւ. հարցրի ես. միթէ քեզ քաղցր է այդ անասնական բնակարանը։

—Առաւօտեան երբ վերջացրի նամազս, պատասխանեց նա, ես պատրաստվում էի ճանապարհ ընկնել, յանկարծ սարը եկաւ։

—Ինչ կը նշանակէ սարը եկաւ։

—Ես միանգամ փուչտացի, դորան ասում են սարը, որ պարսից լեզուով նշանակում է համբերութիւն։ Դա Աստուծոյ ձայնն է, որ յայտնվում է մեզ պահապան հրեշտակի միջնորդութեամբ նա զգուշացնում է մեզ հրաժարուել այն նպատակից, որ պատրաստվումենք գործել։

—Դորա համար էլ դու չես կամենում ճանապարհ ընկնել։

—Չեմ կարող մինչև ջահթ չը գայ։

—Ինչ է նշանակում ջահթ։

—Երբ մի մարդ երկու կամ երկք անգամ փուչտում է, դորան ասում են ջահթ, այդ նշանակում է պարսից լեզուով փոյթ կամ ջանք։ Այդ մի բարի նախազգուշակութիւն է, որով ամէն մարդ պիտի ընտապի չուտով գործել այն, ինչ բանի վերա որ մտածում էր։ 1)

—Ուրեմն դու այնքան պիտի սպասես, որ նորից Աստուծոյ ձայնը լսես մի կամ երկու անգամ փուչտալով։

—Ստիպուած եմ։ Պատասխանեց մօլլան խորհրդական ձայնով։—Մանաւանդ որ ես առաւօտեան իսթիխարայ 2) արեցի իմ թասբէհի 3) վերա և չար գուշակեց։

—Քո թասբէհը երբէք չէ խաբում քեզ. նորանից էլ Աստուծոյ ձայնի պատգամն է լսվում։

—Անտարակոյս. որովհետև նորա հատիկները շինուած են քարբալայի սուրբ հողից 4)։

Ես չը գիտէի թէ ինչ վճռել։ Հաւատի էի, որ մօլլային չէի կարող դուրս բերել իւր նախապաշարմունքներից։ Եւ մեզ տանող չարվաղարն նոյնպէս համաձայն էր նորա հետ։

Ես երկար պէտք է մնայի այդ անորոշ դրութեան մէջ, եթէ տանտիրոջ երեխան, որ կանգնած նայում էր մեզ վերա, բարեբախտաբար մի քանի անգամ չը փուչտար։

—Ահա քեզ ջահթ, մօլլայ. կոչեցի ես. դէ ընտապիր ճանապարհ ընկնելդ. Աստուծոյ ձայնն է այդ. մանաւանդ մի անմեղ արարածի բերանից է լսվում։

Մօլլան, թէև յակամայից, այսու ամենայնիւ յօժարութեամբ չարունակել ճանապարհորդութիւնը։ Եւ ես ուրախ էի, որ պիտի ազատուեմ մեր իջևանի ժանտոտութենից։

Նոյն գիշերը եկած ձիւնը ձգել էր դաշտերի երեսին իւր երկու թզաչափ թանձր վերմակը։ Վաղառաւօտեան ճանապարհ ընկած քարվանի հետքերը խորին կերպով դծել էին ճանապարհի վրայ մի նեղ չափով, որոյ միջով ընթանում էին մեր գրաստները մինը միւսի յետքից չարուած։

Բայց եղանակը գնալով պղտորվում էր և թանձր մարախուղը թոյլ չէր տալիս նշմարել փոքր ինչ բացակայ հեռուն։ Վաղորդեան մեղմիկ քամին սկսեց հետզհետէ սաստկանալ։ Եւ երբ մենք բաւականին հեռացած էինք գիւղից, բարձրացաւ սաստիկ մրրիկ։ Նորեկ ձիւնի հոսանքը, որ գոռալով ու ֆչֆչալով տեղափոխվում էր այս և այն կողմ, բոլորովին ծածկեց ճանապարհի հաղիւ նշմարվող չափը։

Քանի ժամից յետոյ մեր չարվաղարը սարսափելով յայտնեց, թէ մենք մոլորուած էինք ուղիղ ճանապարհից և խորհուրդ տուաւ բաց թողուլ իւր փիշանգի 1) գլուխը, ասելով, թէ այդպիսի դէպքերում ձիաները աւելի ընդունակ են գտանել ճանապարհը, քան թէ մարդիք։

Մօլլայի վրդովմունքը սահման չունէր։ Նա պնդում էր իւր առաւօտեան նախագուշակութիւնները. նա հանդիմանում էր ինձ, որ մենք քրիստոնեայքս դեռ շատ հեռու ենք մնացել ճշմարիտ գիտութիւնից։

Ես ոչինչ չը պատասխանեցի նորան, միայն առաջարկեցի խմել մի բաժակ կոնեակ, եթէ նա չը կամէր սառչել ցրտից։

—Ահա այդպիսի պիղծ ըմպելիքների գործածութիւնը զրկում է ձեզ քրիստոնեաներիդ Աստուծոյ թէ ողորմութիւնից և թէ իմաստութիւնից։ Ասաց նա անախորժ զգայմունքով և իւր բերանը ձգեց ափիսնի մի մեծ կտոր, որ տաքանայ։

Ամրողջ օրը մեր թափառումէինք դաշտերի, տարերի և ձորերի մէջ, չը գտանելով որ և իցէ բնակութիւն։

Օրը տարաժամում էր։

Մեր դրութիւնը տարափելի էր համարվում, երբ մտածումէինք, թէ այն գիշեր պէտք է մնանք դրսումը բացօթեայ։ Մանաւանդ երբ որ տեսանք այստեղ և այնտեղ ձիւնի մէջ սառած մի քանի մարդիք։

Մօլլայի սառած շրթունքը դարձեալ շարժվում էին։ Նա ափիսնի արբեցութեան մէջ իւր աղօթքներն էր կարդում։

Բայց մեր Մեսրոպը, որ դեռ չէր կորուսել իւր վստահութիւնը ինձ խրախոյս տալու, հիմնուելով իւր հին փորձերի վերայ, արձակեց հրացանը։

Մերձակայ տեղից լսելի եղաւ մի այլ հրացանի ձայն։

—Մեք ազատուած ենք։ Ուրախութեամբ կոչեց քաջ զէյթունցին և դիմեց դէպի այն կողմը, ուրկից լսելի եղաւ հրացանի ձայնը։

Քառորդ ժամ գնալուց յետոյ մենք լսեցինք և չան հայելու ձայն, որից կարելի էր գուշակել, թէ արդէն հասել էինք բնակութեան։ Թէև այդ կարծիքը սխալ էր, բայց մեք դարձեալ ուրախ էինք, որ գտանք մի փոքրիկ այր (մազարայ) ուր հաւաքուած էին Սուլդուզի իշխանի Հասան-խանի որդւոյ որսորդները։ Նորա մեզ համար շուտով կրակ վառեցին և միս խորովեցին կերակրի, տարագամ, և այնգիշեր այնտեղ մնացինք մինչև անցաւ մրրիկը։

ՆԱՄԱԿ ՑԻՒՐԻԽԻՑ

Իմ անցեալ նամակումս ես խօստացել էի հաղորդել ընթերցողին մի քանի մանրամասներ այստեղի ուսանողների և ուսանողուհիների մասին։ Այժմ նորա համար հեշտ է ինձ կատարել իմ խօստմունքս, որ այս օրերս հրատարակվեցաւ տեղիս համալսարանի կառավարութեան հոգսերով ուսում առնող երիտասարդների և կանանց վիճակագրական ցուցակը, որտեղ նրանք բաժանված են ազգութեան և պարապմանց համեմատ։ Այդ ցուցակները այնքան հետաքրքիր են, որ ես չեմ կարող նրանցից քաղուածքներ չանել։

Բոլոր ուսանողների և ուսանողուհիների թիւը Ցիւրիխի համալսարանում հաշվում է 437, որոնցից տղամարդիկ՝ 327, իսկ կանայք՝ 110։

Կանանց թիւը, ինչպէս տեսնում էք, բաւական նշանաւոր է, մանաւանդ Ցիւրիխի պէս փոքրիկ

---

1) Բուրակ, առասպելական կենդանի գեղեցիկ կնոջ գլխով, սիրամարգի պոչով, առծուի թեքերով և ձիան ոտքերով, որոյ վերայ Մուհամմէտը նստելով երկինքը գնաց։ Այդ կենդանու սրնթացութիւնը կարելի է հասկանալ նորանով, որ Մուհամմէտը նորանով այնպէս շուտով կատարեց իւր ճանապարհորդութիւնը, մինչ նորա հետ միասին պառկած Այիշան, մարգարէի սիրուն կինը, չը կարողացաւ նկատել իւր ամուսնի բացակայութիւնը, թէև նա երկնքումը ընթրիք էլ արեց, չիր—բրինձ (կաթնափլաւ) կերաւ և Աստուծոյ հետ շատ բաներ խօսեց... և մասլահաթներ արաւ...

Ծան. հեղ.

1) Փիշանգ նշանակումէ առաջնորդող ձի. այդպէս կոչվումեն Ասիայում այն ձիաները, որք միշտ քարվանի առաջն են գնում և ամբողջ քարվանը հետևումէ նորանց։ Փիշանգները այնպէս սովորած են, որ մրրկի ժամանակ և գիշերային մթութեան մէջ, հաղիւ է պատահում որ նորա չեղուին ուղիղ ճանապարհից։ Այդ պատճառաւ նոցա գինը միշտ բարձր է լինում հասարակ ձիաներից։ Իւր գիտութեամբը ֆիշանգը ստացել է և այն արտօնութիւնը, որ քարվանի մէջ նա երբէք բեռն չէ կրում իւր վերայ։

Ծան. հեղ.